ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Հայոց աշխարհիկ։

ԻՍԱՄԿԱԿԱՆ ազգային երգերու մէջ իմաստ միայն կը պահանջուի. անով է որ այսպիսի երգերը որչափ ալ անսովոր կամ աւրուած ոճով գրուած ըլլան, իրենց քաղցրութիւնը և յարգը չեն կորսընցրներ։ Պատճառն մէկն է, մանաւանդ թէ աս տեսակ երգերուն մէջ ամենէն վեր է հոս գրած երգերնիս, իրեն վեմ ու բնական իմաստներովն ու շէնքին վարպետութեամբը։

Հայոց աշխարհիկ, գարունդ է հասել,
Ահա գեղեցիկ գարուն քո եկել,
Ով դու 'ի վաղուց մոռցած հայրենիք
Ով դու իմ սրտիս անմոռաց տեղիք։
Ահա գարունիկդ եկել է եկել,
Լուաց Պասեաց ծարն ընդ քեզ հաշտ հայել.
Ան սև սև ամպերն են դարձել 'ի փախ,
Ան ճերմակ ճերմակ սարերն են անվախ.
Զընիկն 'ի ծոցին բացեր է ճանապարհ
Հաղցրիկ կըրկըջով գլորէ գետս հազար.
Ան քարուտ ժեռուտ կողանց սահ ու սահ
Սաղալով ինքնուն առուակներ անմահ.
Յայն բարձրը ծայրից որ երկնուց են մօտ
Կենաց օրհնութեան ծագէ առաւօտ.
Ահա քո բլուրներն Հայոց աշխարհիկ
Ան քո բիւր բլրունք բիւր վըտականիք
Հազար քո ձորերդ ու հազար քո դաշտ
Տարան ցուրտ ձըմեռդ ու ձիւներըդ շատ.
Լերինք ու հովիտք ընդարձակ ու լայն
Լախշուն զարդարին նոր հարսին նըման,
Կապուտակ սարերդ գունըզգուն պըսակ
Կապեն 'ի գլուխս զինչ նոր թագաւորակ.
Ի ծայրից սարից որ երկնուց են մօտ
Փըռի մինչ 'ի խորն հօրոտն ու մորոտ.
Դետեզերքն ամէն բացել են շուշան
Պայծառ տընտըղնով ցընցըղկեն ու գնան,
Արեզերքն ամէն զվարդն երևցուցին
Ահ կարմրուկ վարդեր, տասատայ [1] Դեմին.
Պլպուլն 'ի հեռուանց թողեց ճրգնարան
Ծովեր ուցամքներ թևեց անգուման [2],
Կանչեց 'ի յոգուն երեք հետ բարև,
Ոտկունքըն դրբաւ 'ի սարին վերև,
Սարին վերևէն 'ի վարդին տերև,
Հայոց աշխարհիկ, քեզ երեսդ բարև.

1 Փունջ. փէսրէ։ 2 Ցանկարծ. պրս. անկիման։

Պարեկն 'ի սարին եկաց ու մընաց,
Ընմեղ նախընծով եղաւ երգասաց.
Բրագիլն յերդիս մաքրեց իր բունիկ,
Կանգնած կրկռաց քեզ, Հայոց աշխարհիկ.
Բրտուտիկրն թռաւ, թռաւ թռաւ վերուվեր
Անրիկ ձրուրղով ասաց շատ բաներ.
Տատրակիկն իջաւ իջաւ ցած ու ցած
Կրծկունքն 'ի գետին ըզվուվուն ասաց.
Հովիւն ու հօտաղ, գառինք, եզն ու կով
Զոհացան զԲստուած մարգեր շուրջ գալով։
Հանց քեզ տէրն է տուել գարուն գեղեցիկ
Որ դրախտի վկայ ես, Հայոց աշխարհիկ,
Դրախտիկն որ անցել՝ գարձեալ գայ գարնամբ
Օ՞ինչ պայծառ արևն որ ծածկէր 'ի յամպ։
Բայց Լահապետիս ինչ ասեմ ծերուկ
Որ եմ քան զամէն ծաղիկ վաղանցուկ.
Իմ գարունս անցել ու հասել աշուն,
Յամքած տերևիկս ըսպասեմ հովուն
Որ երբ 'ի լերանց ծոցուն փըչէ խոր,
Օխըղձուկս անկըսկիծ մահուն ձըգէ ձոր։
Լահապետիս կեանքն եղաւ բաւական,
Խնդութեամբ կեցաւ 'ի յիւրն Հայաստան,
Համ է որ երթայ 'ի յայն հայրենիք
Ուր իսկի չզատուին եղբարք սիրելիք.
Խնդութեամբ կ'երթամ՝ քեզնից Հայաստան,
Քեզնից առած հողս 'ի քեզ տամ թաղման.
Ի՞ քո ծոցէդ վեր կանգնեցաւ Ադամ,
Այս 'ի քո ծոցէդ տ' ելնեմ՝ անթառամ։
Անկտիք շուրջ եկէք ծեր Լահապետիս,
Կանչ դիք շայիր հօրդ յետքի ձայնիս.
Պլպուլն ու սարեկ երգերն են նորել,
Ամն հետ տատրակին հողու հաւսարել։
Անկտիք, զիս Հայոց հողն ու ջուր սնուցել,
Այս այն հողն ու ջուր սրտով եմ սիրել.
Հայրենեաց հարուստ է հողն, ջուրն անուշ,
Քանց օտար վարդ՝ քաղցր հայրենեացն է փուշ.
Հայաստանի օդն է քաղցր ու բարակ,
Հովերն են անուշ՝ պայծառ են վըտակք,
Ջուրն ու պըտուղն համ տան անմահութեան,
Յոտն ոսկի օծէ գառանց ըզբերան.
Յոսկեթել ամպոյն այգուն զովագին
Որթոր իջանէ ցողիկ մանրագին,
Կարմիր ձաձրնչով արևուն շաղաած
Դայ 'ի խաւրծիլ մանանայն կենաց։
Ո՛հ լերունք ծաղկած, ո՛հ ջուրք ծիծաղկոտ
Անուշիկ հովերդ 'ի յիս ածէք մօտ,

1 Պիտի երեմ։

Հողմունք անուշիկ, եկէք մօտ 'ի յիս,
Շունչս ու երգս առէք տարէք 'ի Մասիս,
Տարէք վերջի շունչս 'ի տուն տապանին
Ու լըսեցուցէք զաւակաց Գորգոմին։
Զեզ կ'ասեմ մանկտիք սիրունք նազելիք
Որոնց է բնական Հայոց աշխարհիկ,
Մուրանայք զերկիրդ և զազգըդ սիրուն.
Ծառն արմատով ծառ, տունն հիմամբ է տուն։
Մեր տէրն 'ի յերկնուց ծարէն երբ իջաւ՝
Յրկրիս հիման քարն Մ.Յրարատ եդաւ,
Ա.յն մեր Մասիսու երկնաձև սարէն
Ա.չեց ըզբոլոր՝ վերացաւ նորէն.
Հոն չափեց սահման իւր նախաստեղծին,
Եփրատն ու Դ.Յրասխ բաժակ դրաւ դրախտին.
Կենաց փայտին տունկն 'ի հոն ծաղկեցաւ,
Ոար գիտութենէն բարին մեզ տըրուաւ.
Ի Հայոց հողէն կազմեցաւ Ադամ,
Օգն Հայոց Դ.ւայն ծըծեց քաղցրահամ.
Ա.չքերըն պայծառ երեսքն աննըման
Հրեշտակաց առջև հոն հանդիսացան.
Ծաղկունքս այս ծընած են 'ի յայն ծաղկոց
Որ Դ.ւայի պսակ եղան ու նըստոց։
Ա.յս մեր սարերուս ծերուկ արձագանգ
Ա.ստուծոյ ձայնից տըւին պատասխանք.
Ա.ստից երգք սիրոյ լապաշխարութեան
Յրկինքն 'ի վեր նախ յերկրէս վերացան.
Ա.ռեամբն Ա.քելի Քրիստոս հոս զենաւ,
Երկին և կրկին մեզ յոյս խոստացաւ.
Ադամ ծերունին այս սարիս ներքև
Օաւակացն ասաց իւր յետին բարև.
Ա.յն ձորիկն 'ի վայր լալով գնաց Դ.ւա,
Գ.ղուխն 'ի քարին դրաւ կարօտ Դ.դեմայ.
Ի հոն են նընջել մարդիկն առաջին
Որ հետ հրեշտակաց զԱ.ստուած օրհնեցին։ . .
Դրք գուռաց երկինքն ու երկիր սարսեց,
Ա.մպերն 'ի ծով, ծովն 'ի յամպեր վազեց,
Ա.յն սարին ծարէն Դ.ոյ մտաւ 'ի տապան
Ինքագունտ երկրիս շուրջն եկաւ մանուման,
Իջաւ բազմեցաւ 'ի բարձրըն Մասիս
Օաղու աղաւնին ղըրկեց աւետիս.
Յրկիրս էր դարտակ անապատ ահեղ,
Լուկ 'ի Հայաստան կայր մարդկութեան տեղ.
Մեք եմք հարազատ ծեր Դ.ոյի ծընունդք
Որ ժառընգեցինք զհովիտս ու լերունք։
Դ.ախընծեցաւ Բել բռնաւոր արքայն,
Օհասակն անձուանի կանգնեց բարձր ու լայն.
Ա.յծից պէս շարեց զորքեր անհամար,
Գ.ուխ արև բռնեց մեր երկնուց պայծառ.

Լըսեց Հայկն արի՝ ձէնեց քաջերուն,
Պարն 'ի վար վազեց զինչ կայծակն յամպուն,
Օ՝աղեղըն լարեց կամրջի նըման
Ի՝րոտալով նետ Թռուց զինչ մեծ գերան.
Օ՝երկաթն ու պըղինձ կըրծից հըսկային
Ի՝րտոնն ու Թոքով հանեց կըռնըկին,
Փլաւ Ռէլ բլրէն վար 'ի խոր գերեզման,
Օ՝ետ ծուխ սև զօրքերն եղէն ցիրուցան։
Շ՝ատ կըտրըձիւորայք հանեց Հայաստան
Շ՝ատ Ռէլեր փլուցին քաջքն Հայկի նըման.
Հ՝ոռոմն, Պ՝սորին, Պարն ու կրակ Պարսիկ
Հայոց Թըրերուն եղան պատառիկ.
Բ՝այս սարեր, ձորեր ու դաշտերս ամէն
Կարմիր են քրտնել, կարմիր խըմել են.
Ի՝ հոն են խաղցել Տիգրան ու Տրդատ,
Վ՝արդանն ու Վ՝ահան, Բ՝շոտն ու Սըմբատ.
Հ՝ոն կրակէ Թռ՝ուցել նետ Հայոց մանկտին
Թ՝ըզի պէս Թափել գունդ գունդ Թըշնամին.
Բ՝այս բլուրներուն ծայր դրօշկներ են բացել
Բ՝ուիծն ու արծիւ հետ խաչին վառել.
Օ՝էնք ծարաւած գնացել՝ դարձել են արբած,
Ջ՝ըմռոտած ձակատք պարզել են պսակած։
Ընկել են ընկել հոն Հայոց այլ քաջք,
Մ՝էկ ձեռքըն նիզակ 'ի միւսումըն խաչ.
Թ՝ռել դաշտիցն 'ի վեր՝ ելեր են յերկին
Բ՝ազմել հետ Գ՝րիգոր, Տրդատ Վ՝արդանին։
Բ՝ըգար Թագաւոր մեր քաջ ւիմաստուն
Թ՝ղթով է խօսեր հետ Բ՝ստուածորդւոյն,
Լ՝ինեկ և ընծայ առել Ք՝րիստոսէն
Դ՝ռեսպան ընդունել զառաքեալ Թ՝ադէն։
Օ՝առաջին պատկերն այն սուրբ դաստառակ,
Փ՝րկչին կողաբաց գեղարդըն միակ,
Բ՝այլ շատ նշխարքներ մասունք զանազան
Ի՝ ծոցն է պահել աշխարհս Հայաստան.
Շ՝ատ առաքեալներ ունի իւր քարոզ
Շ՝ատ սուրբ հայրապետ ու շատ մարտիրոս.
Ռ՝իւրաւոր ունի մատրունք ու տաճար
Բ՝նապատ ու վանք համարով հազար։
ՅԱստուծոյ առեր ըզլեզուն ու զգիր
Թ՝արգմաներ յամէն ազգէ գիրք ընտիր.
Ջ՝արպիկ տղայք ղըրկել է Պտրմպօլ, յԲ՝թէնք,
Հ՝այն հոռոմ լեզուով յաղթել է զ՝ելլենք.
Շ՝ատ գրքունք են գրել մեր հարքն ու մագղաթ
Օ՝ետ ցորեն դիզել քանց բարձր Բ՝յրարատ։...
Բ՝այց ափսոս հիմիկ որ չար Թըշնամիք
Ինաւ չեն քեզ խնայել, Հայոց աշխարհիկ.
Լ՝կեղեցիք, վանք, գրատուն ու դարպաս
Թ՝ուով կրակով զարկել ձըգել դաս ու դաս,

Օ ազգն ընչօք տեղօք քանդել ու գերել
Դէմ չորս հովերուն տրուել ու ցրուել.
Լա՛ղ քեզ աւա՛ղ, Հայոց աշխարհիկ,
Ցուն երկնանման, փրլած տաղաւարիկ։ . . .
Այլ ինչ ափսոսամ ըզքեզ Հայաստան,
Որ ձեռքն Աստուծոյ տեսնում յանդիման.
Ինքն է հրամայած քակել, ինք շինէ,
Օ ինչ ըզհետ ձրմռան գարուն քեզ բերէ.
Օ՝ աշխարհն մեր սիրեց Աստուած 'ի սկզբան,
Թէ անէծք երեւ՝ սիրոյ էր և այն։
Ի թուխ ամպերէն ելնէ փոթորիկ,
Ըզհող համբուրեն ծառերն ու մայրիք,
Ցերևքն ու ողկոյզքն մարգարտաշար
Ի յոտից ներքև երթան 'ի խաւար.
Ամպն և փոթորիկ վաղիւ վերանայ,
Որ արև, գարուն, ծառն ու այգին գայ.
Արմատքն հին՝ նոր ճիւղ, հին ճիւղք՝ նոր ծաղիկ
Ընծայեն բնութեան, Հայոց աշխարհիկ.
Դուք այլ կործանած սիւնք, դուք այլ կանգնիք,
Կապին կամարքդ, ո՜հ, սուրբ եկեղեցիք.
Բակեալ վանորէք շինիք հոգւոց տուն,
Դառնան ձեր սաղմոսքն ու ձեր աղերսն։
Այդ քո աւերակք, Հայոց աշխարհիկ,
Որշան մեծութեանդ են, թառմած ծաղիկ.
Թառմած ես՝ այլ վարդ, ցամքած՝ այլ հալուէ.
Ով ըզքեզ օտար ծաղկնուն հետ փոխէ,
Ա կոյր է յիմար. զհոտն անմահութեան
Ընդ սուտ գոյն փոխէ տրխմարն ու տրղայն.
Յիմար է յիմար որ զպարծանքն հարանց
Որթայ վաճառէ ընդ օտար ազանց.
Աշխարհիս օրէնքն՝ որ ծնողք չիփոխուին,
Հայրենափոխք չեն, ուրացողք լինին։
Ծառն արմատով ծառ, ծառոփն է արմատ,
Դալա՛ր մանկտիք, ձեր տակն է Այրարատ.
Պինդ կացէք, Աստուած ցօղէ 'ի վերէն,
Ծլիք, ծաղկիք, փայլիք քանց վարդ 'ի թրփէն։
Ընչի ոք նախանձ չընի հակառակ,
Թէ չէ՝ նման խոտու լինի խայտառակ.
Այլք ծրլին ծաղկին թէպէտ քրչիկ մ'ուշ,
Ցարկամբն մընայ միշտ դրժնիկ ու փուշ.
Որ խելօք սիրով կան զինչ աղբրիկ
Տեսնեն քո գարունդ, Հայոց աշխարհիկ։
Այլ ես 'Լահապետ ցամքած ծերունիս
Որթամ մեր հին հարցըն տամ աւետիս,
Ասեմ թէ գարուն երեկ տանս Հայոց.
Դուք 'Լահապետիս ասացէք՝ Հոգւոց.
Ծեր 'Լահապետիդ կակուղ տուր հողիկ
Որ զքեզ պինդ սիրեց, Հայոց աշխարհիկ։

Այս սրտաշարժ ու գեղեցիկ բանաստեղծութիւնը կարդալէն ու լսելէն ետև, ո՞ր ազգասէր մարդը չըսեր գոլովանօք. Հայո՛ց աշխարհիկ, երնե՛կ քեզի որ այնչափ պարծանքներուդ հետ՝ աս Լահապետն ալ բերիր քու վերջին դարերուդ. որ գործքով իր անունը ձշմարտեր է, և ազգային կտրիձներուն և տղոց մէջ իր ազգին փառաւոր և տխուր դիպուածոց վրայ՝ բնութենէ սորված երգեր հիւսելով պզտիկուց կարդացած և լսած պատմութեանցը վրայ, ասոնցմով և իր խաղաղ ծերութեամբը աչքընեռուն լոյսը պակսած՝ մտքինը սրուած՝ տեսութիւնները կարծես ինչուան մեր օրերէն ալ հեռուն կը հասցընէ։ Մանաւանդ աս Հայոց դաշտերուն Վիրգիլիոսը կամ Հոմերոսն ալ իր բաղդին պէս՝ անծանօթ թողեր է իր կեանքն ալ, բայց անոր պատուական յիշատակները՝ այսինքն երգերէն մէկ քանին բաղդով մեզի հասան մօտերս հին տաղարաններու և ոսկիփորիկներու մէջ թաղուած՝ ուրիշ խառն երգերու և ռամկական ոտանաւորներու հետ։ Մանաւանդ աս գեղեցիկ կտորին և թէ ուրիշ մէկ քանի երգերուն խօսքերէն կ'իմացուի որ աս անմոռանալի Լահապետը պզտիկուց գրոց աշակերտ է եղեր, վերջը չըգիտցուիր ինչո՞ւ համար՝ գրիչը բրչի հետ փոխեր է. իրեն երգերուն շատն ալ աւելի բարձր և մաքուր ոճով երգած պիտի ըլլայ, բայց ուրիշ երգիչներ իրենց լեզուին յարմարցուցեր են։ Կ'երևնայ թէ աս Լահապետը քանի մը դար առաջ՝ Շահաբասին ժամանակները Հայաստան մնացող ազգայիններէն եղած է։ Իրաւ, ինչպէս որ կը գրեն մեզի Հայաստանի ու Երևանու կողմերէն, վաթսուն կամ եօթանասուն տարի կայ որ ան կողմերը քանի մը երևելի բանաստեղծներ ելեր են (որ հոն աղէղ կ'ըսուին), բայց ասոնց բանաստեղծութիւնը բնական տուրք միայն ըլլալով, երգերնին ալ կամ խիստ ռամկական է, և կամ ռամկաց բերանն անցնելով անհասկանալի եղեր է. շատն ալ տաձկի ու պարսկի լեզուով շարադրած է։ Այսպիսի բանաստեղծներուն մէջ անուանի են ատոնք. Այաթնով, Արէշիշ օղլի, Աբլահվերդի, Աղբար Աղամ. աս ետքինը յանկարծախօս բանաստեղծ է եղեր որ 1844ին վախճաներ է։ Իր երգերէն մէկը ուրիշ անգամ կը դնենք Բազմավիպիս մէջ։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ընձոլաղ։

ԸՆԹԱՐՀՈՒՍ զարմանալի կենդանիներէն մէկն ալ ընձուղտն է, որ մեր լեզուովը անալաբ[1] ալ կ'ըսուի։ Սիկայ կը գտնուի Աֆրիկէի հարաւային կողմերը անտառային անապատներու մէջ. աչուքները խոշոր ու վառվռուն են՝ ձիու աչուքներուն նման. ականջները մանր ու եզան ականջներու ձևովն են. եղջիւրները 6էն ինչուան 12 բթաչափ երկայն կ'ըլլան. լեզուին ծայրը սուր ու պինդ է. վիզը՝ հասարակ ըղտու վզին երկուքին չափ կայ. մարմնոյն առջևի կտորը շատ աւելի բարձր է քան թէ ետևի կտորը. սրունքները երկայն են և ոտուրները եզան ոտուրներուն նման. առջևի սրունքները շատ աւելի բարձր են քան թէ ետևինները. պոչը բարակ է՝ ծայրը բրդոտ և սևագոյն. իսկ մարմնոյն մազը կարճ է, միայն բաշը իրեք բթաչափ է։ Ամբոր մարմինը ինձ՝ կենդանւոյն պէս պիսակոտ կամ խայտաբղէտ է, և անոր համար է որ ընձոլաղ ըսուեր է. աս խայտուցները եղերուն մարմնոյն վրայ աւելի բաց գունով են, ինչպէս նաև անոնց եղջիւրներն ալ աւելի կարճ են քան թէ

[1] Տձ. ալ-ուրաֆէ, սուրնոֆա. Լտ. Camelopardalis. Գղ. Giraffe.

[2] Գոֆլան։